

Ա. ԱԴԱՄՅԱՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 19-ՐԴ ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹԹ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ
ՇԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԻ ՄԱՍԻՆ

1828 թվականին Արևելյան Հայաստանը, ազատագրվելով սլաբոսլավական բռնապետական լծից, առնավեա իր բախտը կապեց առևս ժողովրդի և ուսական հզոր պետութեան հետ:

Պատմական խոշոր նշանակութեան ունեցող այդ իրադարձութեամբ հայ ժողովուրդը որոշ հնարավորութեաններ ձեռք բերեց զարգացնելու իր կուլտուրան և երկրի քայքայված անտեսութեանը: 19-րդ դարի կեսերին Հայաստանում կատարվեցին ուշագրավ որոշ փոքր արդյունաբերական նոր հաստատութեաններ հիմնելու և գյուղատնտեսական նոր կուլտուրաներ մշակելու ուղղութեամբ:

Վերահիշյալ հարցերի մասին ղեռնա ուսումնասիրութեաններ չեն կատարված, նույնիսկ չեն հրատարակված արխիվային համապատասխան փաստաթղթեր, որոնք կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրողներին:

Սույն հաղորդումով մասնագետների ուշագրութեանն ենք հրավիրում Մատենադարանի Արխիվային բաժնում պահվող 8 փաստաթղթերի վրա, որոնք վերաբերում են 1850-ական թվականներին էջմիածնում շաքարի գործարան կառուցելու ուղղութեամբ Ներսես Աշտարակեցու ձեռնարկած միջոցառումներին և այդ գործի անհաջող ավարտին:

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի կենտրոնական մասում շաքարի գործարաններ սկսեցին հիմնադրվել 19-րդ դարի 20-ական թվականներից: Դարի կեսերին այդպիսի գործարաններ էին կառուցվել Ուկրաինայում և Ռուսաստանի այլ նահանգներում:

Ներսես կաթողիկոս Աշտարակեցին, որ հայտնի է իր ձեռներեցութեամբ, 1840-ական թթ. վերջերին մտադրվում է այդպիսի մի գործարան կառուցել նաև էջմիածնում, շաքարի ճակնդեղի հումքը մշակելով էջմիածնապատկան կալվածքներում: Իր մտադրութեանն իրագործելու համար նա սկսում է բանակցել Ռուսաստանում բնակվող հայ գիտակ մարդկանց հետ, և նրանց խորհրդով աշակերտներ է ուղարկում Ռուսաստան՝ շաքարի արդյունահանման գործին հմուտ մասնագետներ պատրաստելու նպատակով, պատվիրում է անհրաժեշտ մեքենաներ ու գործիքներ և այլն:

Հրատարակվող առաջին փաստաթուղթը վաճառական Աղաթոն Ակիմովի 1850 թ. մարտի 13-ին Պետերբուրգից Ներսես Աշտարակեցուն գրած նամակն է: Նամակագիրը հաղորդում է, որ ինքը բանակցել է ուսական կառավարութեան հետ, և կառավարութեանը ավել է իր համաձայնութեանը Հայաստանից երկու երիտասարդ տղաների Ռուսաստան գնալու և շաքար

պատրաստելու արհեստը սովորելու մասին: Ակիմովը խորհուրդ է տալիս Աշտարակեցուն շտապ կերպով Մոսկվա ուղարկել երկու հայ տղաներ: Նրա կարծիքով աշակերտները պետք է լինեն 17—18 տարեկան, իմանան հայերեն գրել-կարդալ և ունենան փոքր ինչ ուսուերեն գրագիտություն: Ըստ Ակիմովի տեղեկության, աշակերտներն այդ արհեստը սովորելու են 3—4 տարվա ժամանակամիջոցում, որից հետո՝ վերադառնալով հայրենիք՝ իրենց գիտելիքներով նրանք մեծ օգուտ կարող են բերել:

1850 թ. Սանահնի դպրոցից երկու աշակերտներին՝ Մովսես Տեր-Հախորյանին և Պողոս Սահակյանին, Ն. Աշտարակեցին ուղարկում է Մոսկվա՝ Աղաթոն Ակիմովի խնամքի տակ՝ շաքար պատրաստելու արհեստը սովորելու: Նրանք հինգ տարի մնում են այնտեղ և հմտանում այդ արհեստի մեջ:

Հրատարակվող երրորդ փաստաթղթից պարզվում է, որ վերոհիշյալ աշակերտները, բացի Մոսկվայից, եղել են նաև Պոլտավայի շաքարի գործարանում ու ճակնդեղի դաշտերում, և իրենց փորձնական աշխատանքի մեծ մասը անց են կացրել Ուկրաինայում, վայելելով Ն. Աշտարակեցու վաղեմի ծանոթ՝ Պոլտավայի կալվածատերերից մեկի՝ գեներալ Մ. Պ. Պոզենի խնամքն ու հոգատարությունը:

Գեներալ Մ. Պ. Պոզենը, 1855 թ. մարտի 3-ին Պոլտավայից Ն. Աշտարակեցուն գրած նամակում հայտնում է, որ իր հոգացողության տակ գտնվող երկու հայ տղաները ուշիմ և խելոք մարդիկ են դուրս եկել, նրանք շաքար պատրաստելու գործը լավ սովորել են և կարող են ինքնուրույն աշխատել: Նամակի շարունակության մեջ Մ. Պ. Պոզենը հայտնում է, որ հայ աշակերտներն իրենց լավագույն աշխատանքների համար իրենից միշտ պարգևներ են ստացել, իսկ աշակերտական շրջանն ավարտելուց հետո, նրանցից յուրաքանչյուրին 50 ուրլի ճանապարհածախս է տրվել: Նամակի վերջում նույն Մ. Պ. Պոզենը հայտնում է, որ շաքարի գործարանի համար անհրաժեշտ այն գործիքները, որոնց մասին գրել է Ն. Աշտարակեցին, Պոլտավայում չի կարելի ձեռք բերել, այլ պետք է պատվիրել Մոսկվայի մեխանիկական արհեստանոցներից մեկին:

Գործարանի համար մեքենաներ և գործիքներ Ռուսաստանից ձեռք բերելու և էջմիածին ուղարկելու գործում Ն. Աշտարակեցուն օգնում են Ռուսաստանում գտնվող հայ վաճառականները և մտավորականները: 1856 թ. հունվարի 31-ին Մոսկվայից Հովհաննես Հոնանյանը Ն. Աշտարակեցուն գրում է, որ շաքար արտադրելու համար պահանջվող գործիքները (նաև տպագրական մամուլները) հանձն է առել պատրաստել Մոսկվայի արհեստանոցներից մեկը:

1856 թ. հունիսի 20-ին Մոսկվայից Մսեր և Չարմայր Մսերյանները Ն. Աշտարակեցուն գրում են, որ Հոնանյանը խնդրել է իրենց հաղորդել, որ Թիֆլիս է ուղարկել տպագրության մեքենայի չորրորդ մամուլը և շաքարի գործարանի զանազան գործիքներ:

Շաքարի գործարանը շահագործելու համար սակայն բավական չէին վարպետներ, մեքենաներ և գործիքներ: Գործարանն աշխատեցնելու համար անհրաժեշտ էր նաև հումք՝ ճակնդեղ, որի հայթայթումը դրված էր էջմիածնի վանական կառավարչության վրա: Մեզ հասած վավերագրերից երևում է, որ էջմիածնի վանական կառավարչությունը աշխատել է լավ

սերմ ձեռք բերել և ցանել այն Էջմիածնի կալվածքներում: Այդ տեսակետից արժեքավոր է 1857 թ. հունվարի 18-ի Էջմիածնի վանական կառավարչության մի գրությունը Ատրպատականի հոգևոր առաջնորդ Սահակ Սադունյանին: Վանական կառավարչությունը նրան հաղորդում է շաքարի գործարան հիմնելու նախաձեռնություն, Մոսկվա ուղարկված երկու տղաների վերադարձի, նրանց փորձնական աշխատանքի արդյունքով երեք փթիչի չափ շաքար ստանալու և 1856 թ. գարնանը շաքարի արտադրությունը սկսելու մտադրության մասին և այլն: Վանական կառավարչությունը միաժամանակ հայտնում է, որ ինքը մտադիր է առաջիկա գարնանը վանքի կալվածքներում ճակնդեղ ցանել, ուստի և խնդրում է Պարսկաստանում գնել ճակնդեղի լավ սերմ և ուղարկել Էջմիածին:

Վարպետներ դարձած Պողոս Սահակյանը և Մովսես Տեր-Հակոբյանը Էջմիածնի շաքարի գործարանն աշխատեցնելու համար մեծ ջանքեր են թափում: Երկու տարվա ընթացքում նրանց հաջողվում է հաղթահարել այն բոլոր դժվարությունները, որոնք կապված էին գործարանի գործիքների, հումքի և այլ պարագաների պակասության հետ և մի կերպ աշխատեցնել գործարանը:

Սակայն Ն. Աշտարակեցու մահից հետո (1857 թ.) Էջմիածնի հոգևորականները գործարանը թողնում են անուշադրության: Այդ մասին է վկայում Էջմիածնի Սինոդի 1857 թ. մայիսի 13-ի որոշումը, որի մեջ համառոտ շարադրված է Էջմիածնի շաքարի գործարանի հիմնադրման պատմությունը, ապա նշված է, որ գործարանի գործիքների և այլ նյութերի պակասության պատճառով նպատակահարմար են զտնում փակել գործարանը:

Ստորև հրատարակում ենք Էջմիածնի շաքարի գործարանի մասին Մատենադարանի Արխիվային բաժնում պահվող վերոհիշյալ փաստաթղթերը:

1. ԱՂՍԹՈՆ ԱԿԻՄՈՎԻ ՆԱՄԱԿԸ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ՝ ԾԱՔԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՌԻՍՈՒՍՆԱՍԻՐԵԼՈՒ ԶՍՄԱՐ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏ ՍՈՍԿՎԱ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԱՆՂՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: 1850 թ. ՍՍՐՏԻ 13, ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Ձերին բարձր վեհափառութիւն Տէր Ներսէս՝
սրբազնասուրբ կաթողիկոս ամենայն հայոց

Յորժամ ես ի մօտի բարձր վեհափառութեան Ձեր պատիւ համարեցայ խօսել ի մասին երկու տղայոց յողարկելոց ի տէրութիւնն Ռուսաց, վասն ուսման զբաղուի հաւաքելն և զշաքար յօրինելն, յորում դուք ևս համաձայն եղաք: Այժմ ես խօսած եմ, միմիայն նոքա լինիցին ի ձեր եկեղեցական մարդկանց, 17 կամ 18 ամաց չափ տղայք, միտք նոցա սուր, իմանան զգրութիւնս հայոց և փոքր՝ ուսուսց լեզուաց, քանզի հարկաւոր է նոցա ի ժամ գրելոյ զհաշիւս յայնմ ուսման տեղի: Վասն այսորիկ խոնարհարար խնդրեմ զկարգադրութիւն Ձերին բարձր վեհափառութեան, հրամայեսցուք ճանապարհ ձգել նոցա առ ի Մոսկով, յետ ձգելոյ և տալ զիս գիտութիւն: Իսկ հարկաւոր համարելով բաղկակցիմ զայս, զի ես յոյս ունիմ յաստուծոյ իմ զայս բարեխօսութիւն կախեալ յայնպիսի մարդոյ, զոր նոքա ուսանին մինչև 3 կամ 4 ամս, ըստ որոյ և առնեն զպաշտօրառ իւրեանց: Համար-

ձակիմ ասել, զի յետ սովորելոյ իւրանց բերեսցին զօգուտս մեծս յայգմ
կողմի, որ և դժբօք այլ ամենայն անձինք սովորին և լուսաւորին:

Յորում և մնամ նուստս ծառայ ձեր

Ա. Աքիմով¹

Ի 13 մարտի 1850 ամի
ի Ս. Բետերբուրգ

2. Ն. ՇԱՆՇՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ն. ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ՝ ՇԱՔԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՇԱՍՐ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇԱՋՈՂ
ԱՎԱՐՏԻ ԵՎ ԱՌԱՋԻԿՍՅՈՒՄ ՆՐԱՆՑ ԷՋՄԻԱԾԻՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
1855 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10, ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Վեհափառ կարողիկոս և եպիսկոպոսապետ
ամենայն հայոց, ամենաողորմած տէր

...Ձերդ վեհափառութիւն բարենաճեցաք սուրհանդակով առաքել առ իս
զհինգ հարիւր ութըի արծաթ թղթադրամս վասն երկոցունց չափանաս
աշակերտացն Սանահնոյ ուսումնարանի, Մովսիսի Տէր-Յակոբեան և Պօղոսի
Սահակեան, տուելոցն հոգացողութեամբ հանգուցեալ Ակաթօնի Ակիմեանց
ի գործատուն շաքարաշինութեան, վասն ուսման այնր արուեստի: Երիտա-
սարգքս այսոսիկ յոյժ առաջացեալ են յարուեստիս իւրանց, սակս սրոյ
ստացեալ գտանին լիակատար գովասանութիւն ի նորին զերազանցութենէ
Միքայէլ Պաւլովիչ Պօղենէն, որ գրեալ է յաղագս նոցա առ պատուէլի
Յովհաննէս Ստեփանոսեան Օնանեանց: Ի միջի անցեալ ամսոյ, յառաջ քան
գտանալն իմ զգրութիւնս Ձեր, խօսեցաւ յաղագս առաքելոյ նոցին առ
վեհափառութիւն Ձեր ի ներկայութեան իմում և Յովաննէս Օնանեանց,
ուր նա ինքն մեծաւ յօժարութեամբ յանձն էառ զհոգատարութիւն առաք-
ման նոցին, որոց աղագաւ արդէն ծանուցեալ զնա, սպասեմ այժմոյս պա-
տասխանւոյն ի նմանէ:

Շնորհէք ինձ թողութիւն հաւատարմանէ զվեհափառութիւն Ձեր, թէ
զՁեր բարձր յանձնարարութիւն կատարեցից միակերպ սիրով և մտերմու-
թեամբ և զյետագայէ նմանապէս ոչ կատեցից տալ զպարտ ու պատշաճ
ծանօթութիւն Մեծիդ վեհափառութեան...²

Ի ս. Պետերբուրգ
յամի ազգական 1304

Նիկողայոս Սամոյելեան Շանշլեան³

և փրկչեան 1855—ի 10 փետրվարի

3. ԳԵՆԵՐԱԼ Մ. Պ. ՊՈՋԵՆԻ ՆԱՄԱԿԸ Ն. ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ, ՈՐՈՎ ԳՈՎՈՒՄ Է
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՅՆՈՒՄ, ՈՐ ՆՐԱՆՑ ԴԱՐՁԻ
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԿՂՈԳԱ ԻՆՔԸ: 1855 թ. ՄԱՐՏԻ 3, ՊՈՒՏՆԱՎԱ⁴

На почтеннейшее письмо Вашего Святейшества от 28 января се-
го года спешу иметь честь ответить, что я до сих пор не полу-

¹ ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Ա. Երիցյանի արխիվ, թղթ.
№ 152, վազ. № 96դ.:
² Վազիրազիբը տպագրում ենք կրճատումներով:
³ ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Ա. Երիցյանի արխիվ, թղթ.
№ 152, վազ. № 105:
⁴ Նամակի սկզբում ն. Աշտարակեցին ստացման կապակցությամբ արել է հետևյալ
նշումը. «Նորուն զերեզանցութեան տեսան Միխայիլ Պաւլովիչ Պօղեն, 14 ապրիլի ընկալայ»:

чал от Г. Шаншиева ни письма ни денег, а если получу, то буду иметь честь немедленно возвратить их к Вам. С самого начала поступления ко мне двух учеников из Армян они получали от меня содержание безденежно: по временам я давал им небольшие денежные подарки за их труды и прилежание и перед отъездом выдал каждому в награду по 50 руб. сер. Покойный Агафон Давидович Акимов передал мне сих молодых людей от имени Вашего Святейшества и после Вы сами сооблаговолили писать мне о них. Сохраняя к Вашему Святейшеству глубокое уважение я поставил себя за удовольствие исполнить Ваше желание и бог благословил труды наши. Молодые люди вышли прекрасные и дело свое знают.

Что касается до вещей, которые Ваше Святейшество желает иметь, то вблизи моего имения они теперь не делаются, а их всего удобнее выписать из Москвы от содержателей механического заведения братьев Бутенов. Терку нужно выписать вместе с приводом и назначить сколько берковцев свеклы она должна перерабатывать в сутки.

Поручая себя молитвам Вашим, честь имею быть с глубоким уважением и совершенною преданностью Святейший Патриарх, Милостивый Государь Вашего Святейшества покорнейшим слугою,

М. Позен¹

Полтава, 3 марта 1855

4. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՆԱՆՅԱՆԻ ՆԱՍԱԿԸ Ն. ԱՇՏԱՐԱԿԵՅՈՒՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՆԵՐԻ ԵՎ ԷԿՔԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՎԻՐՎԱԾ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ՝ ՄՈՏ ԱՊԱԳԱՅՈՒՄ ԱՌԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ: 1856 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 31, ՄՈՍԿՎԱՑ

Չերոյին վեհափառութիւն, հասարակախնամ Տէր

Չերեւին ամենայրգ գրութիւնս Չերոյին վեհափառութեան տողեալս յանցելում ամի, ի 16 յուլիսի՝ համարաւ 170, յ8 սեպտեմբերի՝ համարաւ 241, և ի 22 հոկտեմբերի՝ համարաւ 317, ընկալեալ եմ ի վաղուց, մի զհետ միոյ: Այլ զի առ պատասխանագրութիւն նոցին չեմ ձեռնահաս եղեալ մինչև ցարգ յորոց և իցէ պատճառաց, ևս ինձէն զիս արժանի մեղադրանաց դատելով ի մասինս յայսմիկ փութամ նախ առաջին ի սկզբան նամակիս զհայրագութն Չեր հայցել զներողամտութիւն, և չեմ իսկ անյոյս յընդունելոյ զհայցումս իմ:

Մի մամուլ ապագրութեան համակ երկաթեայք, ըստ առաջնոյն օրինակի, և գործիքն շաքարաշինութեան նշանակեալք ի ցուցակին առաքելոյ առ իս ի Չերմէ վեհափառութենէ ի մօտ աւուրս ունին պատրաստել ըստ խոստանալոյ արուեստաւորին, որ յանձն առեալ է շինել զայնս: Եւ ես յեա պատրաստելոյն ամենայն մասամբք՝ ոչ գանդաղեցայց ուղեորել զամենայնն ի միասին ուղղակի ի Տփլիսի գէթ յառաջիկա ամսեան փետրվարի:

¹ Մատենագարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական գրիպան, թղթ. № 176, վավ. № 37:

² Ն. Աշտարակեցին նամակի վրա մակագրել է՝ «Յովհաննէս Ստեփանեան Յօնանեանց, 25 փետրուարի ընկալայք»:

Ի յայտնելն իմ ազնուականին Նիկողայոսի Սամուէլեան Շանշեանց զկամս բարեգութ Տեառնդ յաղագս հասուցանելոյ առ իս զհինգ հարիւր մանէթսն առաքեալս ի Ձէնջ առ ինքն, վասն մատուցանելոյ Միխայել Պաւլովիչի գեներալ Պօզինի, զայս և եթ ընկալայ ի նմանէ պատասխանի, թէ զնախայիշատակեալ գումարն դրամոց դարձուցեալ է անդրէն նորին ազնուականութեանն առ Ձերդ վեհափառութիւն:

Նորին գերեզանցութիւն Մ. Պ. Պօզեն, որում դէպ եղև ինձ հանդիպել ոչ ի վաղուց, խնդրեաց յինէն մատուցանել յիւրմէ կողմանէ Ձերում վեհափառութեան զողջոյն սիրոյ և զհամբոյր յարգանաց՝ յայտնելով զիւրն ջերմեռանդութիւն առ աստուածապարգև հօտապետդ:

Ի նորումս ուրախական լսեմք համբու յաղագս ցանկալի խաղաղութեան, որոյ և մերձ ընդ մերձ հաստատութեանն ակն ունեմք, մաղթելով յԱստուծոյ բարձրելոյ զմեծ ողորմութիւն նորա ի վերա մեր և ի վերա ամենեցուն ըստ օրհնութեան մեծի քահանայապետիդ, որում եմս և եղեց հանապաղ ամենաջերմեռանդն սրտէ ամենախոնարհ ծառայ՝

Յովաննէս Յոնանեան¹

Ի 31 յունվարի 1856 ամի
 Ի Մոսկվա

5. Մ. ՄՍԵՐՅԱՆՅԻ ՆԱՄԱԿԸ Ն. ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԱՄՈՒԼԻ ԵՎ ՇԱՔԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ՍՈՏ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՈՒՂԱՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ: 1856 Թ., ՄՈՍԿՎԱ²

Ազնուական Յովհաննէս Ստեփանեան Յօնանեանց ի 31 յունվարի ուղեորեցաւ աստի շոգեկառօք դէպ ի Պետերբուրգ վասն կարևոր գործոց իւրոց. յետ իբր 10 աւուրց ունի վերադառնալ: Ձերեք հատ մամուլս տպագրութեան համակ երկաթիս առաքեալ է նա հետզհետէ ի զանազան ժամանակս յանցելում ամի ի Տփլիս, առ ի հասուցանել առ Ձերդ վեհափառութիւն, և զչորրորդն ևս՝ նոյնպէս համակ երկաթի, որ այժմս պատրաստեալ լինի, ունի չառաքել յետ դարձին ի Պետերբուրգայ, հանդերձ այլովք ևս գործեօք շաքարաշինութեան, զորս խնդրեալ էիք ի նմանէ: Չայս հակիրճ տեղեկութիւն ընկալեալ ի նոյն ազնուական բարեկամէ մերմէ ի շտապ ժամու ոչ աւելորդ համարիմ հաղորդել և Ձերում վեհափառութեան:

Մ. Մսերեանց³

6. ՄՍԵՐ ԵՎ ԶԱՐՄԱՅՐ ՄՍԵՐՅԱՆՅՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ Ն. ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ, ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԱՄՈՒԼԸ ԵՎ ՇԱՔԱՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԹԻՖԼԻՍ ՈՒՂԱՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ: 1856 Թ. ՀՈՒԼԻՍԻ 20, ՄՈՍԿՎԱ⁴

Չերոյն վեհափառ տէրութիւն, մեծ խնամակալ
 Եկեղեցւոյ Հայաստանեայց

...Յամսոյս 16, գերազնիւ բարեկամ Տեառնդ և հաւատարիմն սրբոյ Եկեղեցւոյ մերոյ Իւան Ստեփանիչ Յօնանեանց, յետ գրել տալոյ զպատաս-

¹ ՀՄՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 181, վավ. № 42ա:

² Ն. Աշտարակեցին նամակի վրա մակագրել է՝ «Մսեր Մաղխտը. 2 մայիսի ընկալայ»:

³ ՀՄՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 181, վավ. № 42բ:

⁴ Ն. Աշտարակեցին նամակի վրա մակագրել է՝ «Մաղխտը. Մսեր Գրիգորեան, 18 օգոստոսի ընկալայ, 10 սեպտեմբերի պատասխանեցաւ, համար[աւ] 303»:

խանի գրութեան Ձեր առ ինքն յ2-էն ամսոյս՝ համարով 200, խնդրեաց յինէն ծանուցանել Ձերում վեհափառութեան, թէ առաքեալ է ի Տփլիսիա զչորրորդ մամուլն տպագրութեան և դայլ գործիս շաքարաշինութեան, որպէս նշանակեալ կան յառանձին թերթի, զոր գտանէք ի սմին...¹:

Ձերոյն վեհափառ տերութեան նուաստագոյն ծառայք

Մսեր Մսերեանց
Չարմայր Մսերեանց²

Ի 20 յուլիսի 1856 ամի

Ի Մոսկուա

7. ԷԶՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՈՐՈՎ ՉԱՆՁՆԱՐԱՐՎՈՒՄ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԼԱՎՈՐԱԿ ՃԱԿՆԴԵՂԻ ՍԵՐՄ՝ ԷԶՄԻԱԾՆԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐՈՒՄ ԵԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՉԱՍԱՐ ԼԱՎՈՐԱԿ ՃԱԿՆԴԵՂ ՑԱՆԵԼՈՒ ՉԱՍԱՐ: 1857 թ. ՉՈՒՆՎԱՐԻ 18, ԷԶՄԻԱԾԻՆ

Գերապապիւ առաջնորդին հայոց Ասրպատակահի
Սահակ եպիսկոպոսի Սաղունեան

Համար 12
Ի 18 յունվարի
1857

Աշակերտք շաքարագործութեան, զորս առաքեալ էր նորին վեհափառութիւն ի Մոսկվա յաղագս ուսանելոյ ի գործարանին վերոգրեալ արհեստի, ի սկզբան գարնան անցեալ ամի վերադարձեալ ի սուրբ էջմիածին՝ ձեռնարկին պատրաստել զգործարան շաքարաշինութեան և յանցեալ աշնան ի ձեռք բերեալ ընդ ձեռն վանքական կառավարութեանն զբաւականաչափ ճակնդեղ և նոքօք փորձ փորձեալ արհեստի իւրանց շինեցին յԱթոռ այսր երեք փութիւ չափ սպիտակ և մաքուր շաքար: Ի փորձոյ անդի ընկալեալ նորին վեհափառութիւնն ի Թիֆլիզ առաջադրէ վանքական կառավարութեանս տալ բերել ի Պարսկաստանէ զսերմն բազուկի յաղագս սերմանելոյ ի կալւածս վանիցն էջմիածնի յառաջիկայ գարնան, ուստի սահմանեցին խնդրել ի Ձերդ սրբադնութենէ հող յանձին կալեալ հրամայել որոց հարկն է գնել յայտր զչորս լիտր սերմն բազուկի սերմանեցելոյ ի մէջ առ սեահողոյ և ոչ բորակայնոյ և փութով անարատութեամբ հասուցանել ի վանքական կառավարութիւնս վասն վերոգրեալ հարկաւորութեան, ստանալով ի սոյն Ատենէ զգինն և զվարձ բերողացն շնորհակալութեամբ³:

8. ԷԶՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻ 1857 թ. ՄԱՅԻՍԻ 13-Ի ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՑԱՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐԱԺԱՐՎԵԼՈՒ, ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵՏԱՂ ԷԶՄԻԱԾՆԻ ԾԱԽՍԱՐԱՐՆԵՐԻՆ ՉԱՆՆԵԼՈՒ ԵՎ ԵԱՔԱՐԱԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ ԱՋԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի 13-ն մայիսի յամի փրկչական 1857 և ազգական ՌՅԶ ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինօդիս լուան նախ զխնդրագիր և երկրորդ յայտարարութիւն վարպետաց շաքարագործութեան Պողոսի Սա-

¹ Կաթողիկոսական դիվանում պահպանվել է նաև այդ առանձին թերթը, որի վրա գրված է. «Для Его святаейшества патриарха Нерсеса отправлены из Москвы нижеследующия вещи: Типографский станок, 4 мая 1856 г., машины и инструменты для сахарного завода, 13 июня 1856 г.» (Կաթող. դիվան, թղթ. № 184, վավ. 513):

² ՀՍՍԹ Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 181, վավ. № 243:

³ ՀՍՍԹ Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 185, վավ. № 90:

հակեան և Մովսիսի Տէր-Յակոբեան ի 26 ապրիլի և 10 սոյն մայիսի ներկայ ամի, յորոց առաջնովն յայտնեն թէ ի 1850 ամի վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Ներսէս, առաքեաց զնոսա ի Ռուսաստան յաղագս ուսանելոյ զարուեստ շաքարաշինութեան և այն ի պէտս օգտի Աթոռոյն, և նոքա յընթացս հինգ ամաց, առանց իրիք ծախուց և ձեռնատուութեան սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, ուսեալ անթերի զայն արուեստ քրանաջան և անձնանուէր աշխատանօք վերադարձան աստ, ուրանօր շարունակեալ յընթացս երկուց ամաց մեծաջան աշխատութեամբ ի կատար ամեալ զփորձ շաքարի ըստ պատկանելոյ՝ առաջի են արարեալ նորին սրբութեան, յորում թէ գորքան ճիգն ի գործ եդին ի սրաէ կարեն վկայել ճշմարտասէր միարանք Աթոռոյն, որք իսկապէս եղեալ են ականատեսք, մանաւանդ սրբազան Մակար եպիսկոպոսն, որոյ տեսչութեամբն է լեալ այն ամենայն գործն: Այլ որովհետև հոգելոյս հայրապետին թողեալ անկատար զայս գործ՝ կնքեաց զկեանս իւր ըստ սահմանեցելոյ վերին տեսչութեան, վասն որոյ խնդրեն ի Մինօգէս կամ հրամայել շարունակել վերստին զայս արուեստ, զի մի՛ ի դերև ելցէ տարժանաքիրտն նոցա վաստակ և ընդ նմին նշանակել վասն նոցա զարժանաւորն ոսճիկ և կամ հատուցանել զանցելոց ամաց բազմաշխատ ծառայութեանց զարժանաւոր վարձս, ըստ որում գրծուարին է նոցա ուսանիլ նոր արուեստ աշխարհաօդուտ մակացութեանց և նովաւ ապահովել զկենցաղ իւրեանց: Եւ երկրորդումն մատուցանեն զցուցակս գործարանապատկան գործիաց, պարագայից, սերմանց ճակնդեղի, եղեգան շաքարի և ներկորէից, յարակցելով թէ յընծայելն ի լոյս զկատարեալ փորձ շաքարի գոյացեալ եղև վեց գլուխ շաքար յորոց երեքն առաջի արարին նորին վեհափառութեան, զմինն մատուցին տեղակալ Ատենայեալի Մինօգիս, զմինն Մակար եպիսկոպոսին և միւսն մնայ առ նոսա ի ցոյց ցանկացողայ, և յայտնեն՝ թէ յընթացս այսքան երկարատև անխոնջ աշխատութեանց նոցա, ոչ միայն չէր պարտ ցուցանել զայսքան սակաւաքանակ շաքարս, այլ և ի լոյս ընծայել կարէին առաւել քան զերեք հազար փութս, այս պակասութիւն էր ոչ ի նոցանէ, այլ ի պակասութենէ գործարանաց և պարագայից, որք ոչ գտան աստ ըստ սահմանելն կարգի հասարակեալ գործարանաց պարագայից նոցին՝ եղելոց ի Ռուսաստան: Ի մատուցեալ ցուցակացն առաջնոյն երևին զանազան գործիք և պարագայք գործարանին շաքարի Աթոռոյն են՝ ժեշտեղէն 11 յօդուածովք, երկաթեղէն 16 յօդ., պղնձեղէն 3 յօդ., գործիք բերեալք ի Ռուսաստանէ 4 յօդ., ի գործարանէն Տփլիսայ 6 յօդ., փայտեղէնք 23 յօդ. և երկրորդէն՝ սերմորայք բաղկի, եղեգան շաքարի և զանազան ներկորէից 8 յօդուածով: Իսկ ի մատենէն ծախուց հանգուցեալ կաթողիկոսի երկեցաւ, զի նորին վեհափառութիւն շնորհեալ է վերոյիշեալ Մովսիսի Տէր-Յակոբեան զերկու հարիւր բուրլիս ի Տփլիսս քաղաքի, ի վարձ նոյնպիսի աշխատութեանց նորա ի վերա շաքարաշինութեան:

Հրամայեցին: Ի վարձ երկամեայ աշխատութեանց ի վերայ շաքարաշինութեան վերոյիշեալ վարպետացն Պօղոսի Սահակեան և Մովսիսի Տէր-Յակոբեան, տալ իւրաքանչիւրոցն ի նոցունց զչօրս չօրս հարիւր բուրլիս արծաթոյ ի գանձարանէն Աթոռոյս ընդ նոցունց ստորագրութեամբք, ընկալնելով ի հաշիւ հասանելի մասին երկրորդին ի նոցունց՝ Տէր-Յակոբեանցի և զշնորհեալն ի հանգուցեալ Հայրապետէն 4200 սուրլին, և առ այս

վախճան առաքել հրաման դանձապետին սորին վասն պատշաճաւորն կատարման վերոյգրելոցն: Այլ որովհետեւ շարունակութիւն շաքարաշինութեան ի վանս էջմիածնի ըստ երկամեայ փորձառութեանն երկեցաւ անձեռնատու և անօգուտ, վասն որոյ դադարեցուցեալ զայն, ծանուցեալ նոյն խնդրագործ վարդապետացն պատուիրելով նոցա, զի զամենայն ըստ տեսչութեամբ նոցին եղեալ պարագայս, գործիս՝ թէ պղնձեղէնս, և թէ փայտեղէնս ևս, և սերմօրէջս յանձնել ծախսարարացն Աթոռոյս՝ Եղիազար և Սարգիս վարդապետացն, որոց և հրամանագրել՝ զի զստացեալ զայնսսիկ իրեղէնս ի վարպետացն ըստ առաջարկեալ ի նոցանէ ցուցակին յանձնեսցին զայնս գործավարաց անտեսական կառավարութեան Աթոռոյս ըստ իւրաքանչիւր տեսակացն և ըստ անձնիւր պաշտաման գործավարացն, պատուիրելով վերջնոցն յիւրանց զիմաց, զի զստանալի իրեղէնս գրեցէն ի մուտս ի տուեալ ի Սինօղէս իւրաքանչիւրոցն նոցունց առ այս առարկայ ժապաւինեալ մատեանս: Առ այս վախճան առաքել առ ծախսարարսն զպատճէն ցուցակի պարագայից և այլոց մատուցելոց Սինօղիս ի շաքարագործ վարպետաց և այսու գործն ըստ այսմ առարկայի ի Սինօղիս համարել աւարտեալ վասն տարոյ յիւրումն ժամանակի յԱրխիւն ի պահեստ:

Տեղակալ ատենապետի՝ Գուկաս արքեպիսկոպոս
 Անդամք Սինօղի՝ Արքեպիսկոպոս հայոց Սարգիս
 Եղիազար վարդապետ Տէր Կարապետեան
 Գրիգոր վարդապետ Յովբեանց.
 Գէորգ վարդապետ Մկրտչեան
 Սարգիս վարդապետ Տէր Գնապարեան

Ի պաշտաման ատենադպիրի (ստորագրություն)՝:

1 ՀՍՍԻ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Սինոդի օրագրություններ, թղթ. № 41, վավ. № 305:

